



քանակն է՝ րէ տարրեր աչ պիտի գրէի, երբ հարկ ըլլար գրել: Բայց նոյնոքեամբ կը ներկայացընեմ գտնուող այստեղ՝ ցոյցընելու համար մեր յարաբերութեանց գաղտնիքն և մեր բարեկամութեան սկզբնապատճառը:

Կ. Յ. ԲԱՍՄԱՅԱՆ

## ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

ՓՐԻՂԻՄ ՄԻԽԱԷԼԵՐ Թէկն գերմանացի ընտանեաց սերունդ՝, բայց ծնած է ի Յենիկ Բոհեմիայ (5 մարտ 1834): Ուսմանց սկզբնական ընթացքն ըրաւ նախ ի Զլայիմ Մուրաիոյ, ապա ի Վիեննա և ի Գէոտտինգէն, սկսեալ 1853է՝ մինչեւ 1857: Հետեւեալ տարին Վիեննայի Համալսարանին մասնեան պարանին մէջ պաշտօն վարելով, ապա արքունեաց մատենադարանին վերատեսուչն անուանեցաւ: 1866ին արտասովոր ուսուցիչ եղաւ Համեմատական լեզուագիտութեան և սանսկրիտ լեզուի, որմէ երեք տարի յետոյ (1869) ստացաւ Ուսուցչապետի տիտղոսն<sup>1</sup>. Նոյն տարին կայսերական Գիտութեանց Ճեմարանի անդամ եղաւ: 1884ին արքիէիանդութեան պատճառաւ հրաժարեցաւ մատենապարանապետի պաշտօնէն:

Բոլորովին բանասիրական և ցեղաբանական ուսմանց տուաւ ինքզինքը Միլլեր: Իր գլխաւոր գրութեան է Ծրագիր լեզուագիտութեան (*Grundriss der Sprachwissenschaft*) խորագիրը կրող երկասիրութիւնն, որուն տպագրութիւնն սկսած է 1876ին և աւարտած 1887ին. եռահատոր հսկայ գործ մը, յորում հեղինակը կու տայ մեզ քերականական համառոտութիւն և ընթերցման համուածներ՝ ամէն ծանօթ լեզուաց: Այս գը-

րութեան կ'ամբողջացընէ ուրիշ երկասիրութեամբ մը, զոր կը կոչէ Ընդհանուր ազգագրագիտութիւն (*Allgemeine Ethnographie*), որուն առաջին տպագրութիւնն եղած է 1873ին և երկրորդն՝ 1879ին, ի Վիեննա, հանդերձ ցեղաբանական ատլասով մը (*Ethnologischer Atlas*, Վիեննա, 1884): Ինքը Միլլեր յորինեց աւստրիական Novara կոչուած մարտանաւուն ճանապարհորդութեան ատլաս տրուած տեղեկութեանց թէ՛ լեզուագիտական մասն (տպ. ի 1867), և թէ՛ մարդաբանական մասն (տպ. ի 1873)<sup>2</sup>:

Մեր մինչեւ հիմայ ըսածներէն քիչ շատ կրնայ հասկըցուիլ՝ որ մասնապէս մը չէ Միլլեր, կ'ըսէ Երուսաղէմ. սակայն առանձին պարագամունք ընտրած է երանեան լեզուաց ուսումնասիրութիւնն, որոնց թուոյն մէջ կը դառն նաեւ Հայերէնը, քան ուրիշ լեզուաց: Իր լեզուաբանական գրութիւններն հրատարակուած են՝ առաւելապէս՝ Վիեննայի Գիտութեանց Ճեմարանի Նստից տեղեկագրոց՝ փիլիսոփայական — պատմական բաժնին մէջ<sup>3</sup>, և որոնց ժամանակագրական ցուցակն հոս կը դնենք:

Ի հատորն ԼԵ, 1860, յէջ 194—199, 1<sup>o</sup>. — Բայական յետադասը հայ լեզուի: 2<sup>o</sup>. — Անշասնը հայ թռչոց: Ի հատորն ԼԸ, 1861, 570—595 հատուած մը հայ լեզուի ձայնաիւտութեան նկատմամբ, զոր քննադատեց Էմպլը (ի *Göttingische Gelehrte Anzeigen*, 1862, յէջ 964), և որոյ շարացաւ րութիւնն երեւցաւ ի հատորն ԽԱ, 1863, յէջ 3—14, և ի հատորն ԽԲ, 1863, յէջ 249—253: Արդէն նոյն տեղեկագրոց ութերորդ հատորին մէջ (283) Հ. Կղեմէս վ. Սիպիւքեան հրատարակած էր Ռուսիոյ, Պարսկաստանի և Հնդկաստանի մէջ սովորական եղած հնչմանց վրայ տեղեկութիւններ: Ի հատորն ԽԳ, 1863, յէջ 551—567, Տեղեկագրիւն մը անուանց հորովման վրայ ի հայ լեզուի: և յէջ 576—580 յօդուած մը զինաւոր գեր-


1. ՏՀ՝ Բազմապէս, 1898 Թուիս, էջ 345:

2. Vapereau, *Dictionnaire contemporain*, ի համարն Frédéric Müller.

3. Vapereau, աճք:

4. Vapereau, աճք:

5. Sitzungsberichte der K. K. Akademie der Wissenschaften in Wien, Philosophisch-historische Classe.



Բարեկամս և սիրելիս Վ. Կ. Մ. Կասաբեկեան  
 Վրեճենա. 26. Դեկտ. 1890. Միշտ առաջ. Գ. Միսկին

անուանց վրայ երանհան ու նաեւ հայ լեզուի մէջ, ի հտ. ԽԸ, 1864, յէջս 227—242, Ձագա քուրդ գաւառաբարբառին վրայ, Յէջ 424—430, Հայկականք վերնագրին տակ՝ հինգ հատուածք առա յետագոս վանկին վրայ, և աստուած, կոչոր, առիւծ, ձուկն բառերուն: Իսկ յէջն 431—438 Հայկական գրութեան ակզբնաւորութեան վրայ, վիճաւ գրեալ համեմատական ցուցակով մը հայ և վրացի այբուբենից: Միւլլեր կը կարծէր՝ թէ անոնց ծագումը փնտռելու է արամեականին քանի մը ձեւերու մէջ, յորոց յառաջ եկած է նաեւ պահլայիկն ու հնդկին: Ի հտ. ԿԻ, 1870, յէջս 47—56, հայ բայից անկատար գէմքին վրայ, ինչպէս նաեւ դիտողութիւնք քանի մը Հայկական բառից, որպէս աղոռնա, տէր, սիրամարդ, վարդապետ, և այլն, և իրական ունի վերջաւորութեան: Հտ. ԿԵ, 1870, յէջս 261—278, դիտողութիւնք երկու հայ սեպագիր արձանագրութեանց վրայ: Հտ. ԿԶ, 1870, յէջս 261—278 հայ լեզուի բառից վերջաւորութեանց և շեշտի կանոնին վրայ, յանունս և ի դերանուանս և ի բայս. և դարձեալ ստուգաբանութիւնք քանի մը հայ բառից. իսկ յէջս 277—8, կը խօսի այն օտար (արամեական) բառից վրայ, որ փոխ առնուած են Հայերէնէ և Հայերէնի միջոցաւ: 1874ին կը հրատարակէ տեսութիւն մը բայից երկրորդ գէմքի ս վերջաւորութեան վրայ, գործիականին ք տառին վրայ, և քանի մը բառերու ստուգաբանութիւնները կ'ընէ: 1878ին բայից սահմ. կատարելալի և ստուգապականին ց տառին վրայ, և քննութիւն մը ս, շ, ց տառից. դարձեալ ստուգաբանութիւնք քանի մը բառից: 1877ին ընտիր յօդուած մը՝ սա վերնագրով, Հայերէնի դիրքն հնդեւրոպական լեզուաց շրջանին մէջ: Նոյնպիսի տեղեկութիւնք և տեսութիւնք մեր լեզուի նկատմամբ յաջորդ տարիներու թերթից մէջ ալ, զորս աւելորդ կը համարէնք մի առ մի յիշատակել ընթերցող-

դաց չժանրանալու համար. միայն կարելոր է ըսել՝ թէ նոյն թերթի ձեռն հատորին մէջ (1890) Հայկականք Զ յօդուածով՝ յաւելուած մը կ'ընէ Հիւրմանի քննած Հայերէն 299 բառերու: Այս յօդուածին մէջ Միւլլեր 69 Հայերէն բառից ստուգաբանական մեկնութիւնք տալով կ'ընէ, «Թէ ապահովութեամբ մեկնուած բնիկ Հայերէն բառից թիւն իբր 350 կը բարձրանայ»:

\* \*

Աշխատակից եղաւ Միւլլեր հայ լեզուին վրայ գրած յօդուածներով՝ Արեւելք և Արեւմուտք կոչուած եռամսեայ Հանդիսին, զոր Բենֆէյ կը հրատարակէ ի Գէոտրոպիկն (1860—66), որոնց մէջ նշանակութեան տրամանի է Եօրն իմաստասերը կոչուած վիպասանութեան հայ թարգմանութեան վրայ (Հտ. Բ. 369—374) գրածն, և որոյ ուսումնականութեան մը ակնարկութիւնն ըրած էր Լէրիս: Ուրիշ մանր մունք ստուգաբանական հատուածներու ալ հնդկական է հանգուցեալը, գերմանական Հանդիսից մէջ:

Գլխաւոր աշխատակից եղած է Միւլլեր՝ վիեննայի Համալսարանին Արեւելեան կամ ճառին ձեռքով Հաստատուած (ի 1887) Արեւելագիտական Ուսումնաբարբիքն, որոյ երկրորդ տարւան (1888) հատորին մէջ՝ կը խօսի Ղեւոնդեայ երիցու և Ասողկան պատմական երկասիրութեանց վրայ, որոնք առատամիտ նպատակը ազգային Մեկեմասի մը, Յովսէփայ Խզմիրեանց Ղարաբեցոյ, ապագրուած են ի Պետերբուրգ (1885 և 1887): Մանրամասն և շահագրգիռ են նոյն գրոց վրայ տեղեկութիւնք, ինչպէս իր աճէն ուրիշ հատուածք՝ նոյն Հանդիսին մէջ, Յէջս 245—248 կը քննադատէ Ասողկան մէկ պարբերութիւնն Հայ այբուբենի գիւտին նկատմամբ, պնդելով թէ Մետրովպ միայն ձայնաւոր տառից գիւտն ըրած ըլլայ: Գիտելու

1. Միւլլերի այս յօդուածին՝ նոյնպէս և վերջին տարիներու մէջ գրած այլ և այլ յօդուածներուն թարգմանութիւնք կը գտնենք փա-

փագողք՝ Հանդիս Ամսթերայի անցեալ համարներուն մէջ:

2. Wiener Zeitschrift für die Kunde des Morgenlandes,

տայ մասնաւորապէս՝ թէ հայերէնի ձայնաւորաց նախընթաց պակասութիւնը, պատճառեղած ըլլայ անոր նուագութեան կամ աղբարտութեան: — Նոյն հատորին մէջ (258—262) տեղեկութիւն մը կու տայ 1884ին էլմիածին տպագրուած Առաքել Դավրիթեցոյ պատմագրութեան վրայ՝ իսկ չորրորդ հատորին մէջ (1890, յէջ 213—216) Խորե իմաստեղ վիպասանութեան վրայ տեղեկութիւն մը: Իրեք անգամ տպագրութեամբ հրատարակուած է այս Թարգմանութիւնն, ի 1696, 1721 և 1741. վերջին տպագրէն օրինակ մը նուէր ընդունելով ինձմէ՝ անոր քննադատութիւնը կ'ընծայէ Միւլլըր: Եւ յէջ 284—288 կը մեկնաբանէ Վարդանայ Բարձրբերցոյ. մէկ հատուածը (տպ. ի Մոսկուա, 1861 խաղորդ տարին ի Վենետիկ), նկատմամբ հայ տառից, որ կ'ըսէ թէ Մեսրոպ ընդունած ըլլայ ի Դանիէլ ասորոյ քսանութեկու տառը, և միւս տառերչորսն աստուածային յայտնութեամբ, մինչ Խորենացի և Ասողիկ կ'աւանդեն՝ թէ նախամեսրոպեան այբուբենն ի քսան և ինն տառից կազմուած էին: Հինգերորդ հատորին մէջ (1891) Ղազար փարպեցի և Կորիան վերնագրին տակ հատուածով մը՝ այս երկու մատենագրաց իրարու հետ ունեցած աղերսին աստիճանը կը քննէ (յէջ 36—38): Իսկ յէջ 52—58 Մխիթար Գոշ հատուածով կը ստորագրէ և կը քննադատէ Վահան վ. Բաստամեանցի հրատարակութեամբ «Մխիթարայ Գոշի գատատանագիրք»ը, Վաղարշապատ, 1880. Նոյն հատորին մէջ՝ (68—75) «Մանր դիտողութիւնը» վերնագրին տակ՝ ուրիշ հատուածով մ'ալ՝ քանի մը բառից մեկնութիւնը կու տայ, որպիսիք են՝ ճաղի, պտւմն, ոստիկան, Արամազդայ ցօտի = «ծիածան» նշանակութեամբ, տռն = «աշխարհ, երկիր, ազգ, ժողովուրդ» նշանակութեամբ. յետոյ նոյն հատուածին մէջ Փարպեցոյ հետ կը համեմատէ Միւնիաց պատմիչ Մտեփանոսի ի Ղազարայ թարգմ. մասն.

սերն. և ապա կը սրբապրէ Թովմայի Արծրունոյ պատմութեան մէկ քանի ընթերցուածքն, և ի շարք որոց՝ կ'առաջարկէ Ա. զէ. Ե. (էջ 39, հրտ. Պտկ.) «Նոյնժամայն Գոնքսէն և Արշէլ վազ առեալ պատահնէ Լիդեացոցն» հատածին՝ վերջին անունը կարգալ «Լիդեացոց թագաւորին», զոր ես կը սրբապրեմ միայն «Լիդեացոյն»: Գարձեալ նոյն տեղ կը համեմատէ Արծրունոյ պատմութեան այն մասն՝ որ առնուած է Ստոյն — Կալլիթիոնայ Աղեքսանդրի պատմութիւնն: Ութերորդ հատորին մէջ (1894, յէջ 155—160) կրկնելով թէ հայերէնի թաղաձայնք սեմական այբուբենը վրայ ձեւուած են, կը յայտնէ թէ ձայնաւորներն ալ աւետականէն առնուած են, ուստի և կ'եզրակացնէ. «Ոչ թէ արեւմուտը՝ ի Բելգանդին, ալ արեւելք՝ յԱսորիս և ի Պարսս փնտռելու ենք այն սերմանքն, որոնցմէ զարգացած է հայերէն այբուբենն»:

\* \* \*

Հրատարակած է զարձակ Միւլլըրի *Vienna Oriental Journal* հանդուցեալ Յուն Հանուշի ընտիր երկասիրութեան վերջին մասն՝ Լեհաստանի մէջ խօսուած հայ գաւառաբարբառին վրայ:

Մասնաւոր յօդուած մ'ալ գրած է Միւլլըր՝ ի Բերլին հրատարակեալ *Beiträge zur vergleichenden Sprachforschung auf dem Gebiete der arischen, celtischen und slavischen Sprachen* ուսումնաթերթին մէջ, յորում Հայ լեզուի առանձնայատկութեանց վերայ կը խօսի, ըսելով թէ, «Հայկական տառն բանէ յառաջ երանեան լեզուաց մասն կը կազմէ, անով որ մասնակից է այն ձայնական փոփոխմանց, զոր կը նկատենք անոնց մէջ, մանաւանդ թէ անոնց մէջ ծանօթագոյն պարսկականին. օրինակ իմն, իր առանձին միտումն առ հազարայինն, յաճախ անցըր սանսկրիտ ալ հնչմանէն ի խ (ծվ) և սկզբնական վէն ի կ. (օր. խոյր = սափար, գոյն = սփապնա)»: Բայց նոյն հատորին մէջ (Գ, 457—464) հմուտ երանագէտն Փրիդ. Շպիգլ՝ կը քննադատէ իր իմաստուն ու

1. Այս մասին ընդարձակ տեղեկութիւն պիտի տրուի Թղթակցութեանց շաբէին մէջ:

սովաժակցի կարծիքն: Այսպես նաև ուրիշ Հայերէնագետներ, որոնց պարագլուխն է ուսուցչապետն Հիւրշման, համաձայն չեն Միւլլերի այն կարծեաց: Այսօր հաստատուած է թէ Հայերին՝ հնգերապական նախաբեղոյն զիտաւոր բարբառներէն մին է, և անոր առանձին մէկ ճիւղը կը կազմէ — վերջապէս նոյն Ուսումնաթերթին մէջ (էջն 46 Վ) «լըսէ՛ թէ՛ վանայ արձանապրովթիւնը հաւա՛նականաբար կը ներկայացրին մեզ Հայկա՛կան Հին լեզուն, ինչպէս կը պնդէր նաև Մորթման: Այս մասին վերջնական վճիռ մը չէ տրուած տակաւին, առանց նայելու Մէյսի և այլոց կարծեաց: Եւ այսօր աւելի ձայնա՛կից եմ՝ Միւլլերի քան ուրիշներու, ենթա՛կրելով որ Հայոց նախագրաբարեան լեզուն եղած ըլլայ այն: Բայց այդ խնդրոյն կը դաճանաք ուրիշ անգամ:

✱ ✱ ✱

Քիչ մ'ալ լսեցք Միսլլերի մօտէն ծա-  
ծօթ անէի մը վկայութիւնն, որ հրատարա-  
կուած է Բեռլինի Երանցի օրացրի Բ տարի Յ13  
թուոյն մէջ, «Վոսմ» ստորագրութեամբ և  
սա վերնագրով. «Տըզ. Ֆրիտրիխ Միսլլեր  
Հայագետ»։ Պր. Յոգուսմայերի կ'ըսէ.

« 1894-ի ամառը Վիեննա հասնելով, առաջին փափաքներես մին եղաւ տեսնել հայազաւ ծանօթ բրոֆէսոր Տըզ. Զրիտորիի Միլլեր - Վաղուց արդէն թղթակցութեան մէջ էի իր հետ. ուստի գրեցի միայն որ Վիեննա եկած ըլլալով, զինք անձամբ ճանչնալ կը փափաքեմ. և անմիջապէս միւս օրուան համար ծածմ նշանակեց: Իր ընտանաբանն, որ ինձ տեսքան հիւրընկալ եղաւ այնչեղետես — Գ. Թաղը, Մարքսը-փողոց, տան մը առաջին յարկը, զեղեցիկ, բայց ոչ բնաւ գիտուն ընտանութիւնը մատնող. սրահը՝ զրքատուն չկայ, հապա դաշնակ, Պատեքն և սեղանն արեւելեան զոգզերով ուրանուածքներով ծածկուած են, և վարպետին արեւելքի համար ունեցած ճաշակը ցոյց կու տան, ու զորս, գէտի, այլ աշխարհէ մարդու. — բարեկեցիկ ու ճաշակաւոր անձի մը սեմեակն: Հազու

առանձին շուրջն ընայելու, ներս կը մտնէ ինքը, բարձրահասակ, գէր և կորովի, մազն ու մորթըը ձեան նման սպիտակ, առոյգ մի ծերունի, ժպտուն, բարեմիտ գէմբով. նստանք և խօսակցութիւնն սկսաւ գերմաներէն և Տըգը. Միւրիկ կը հետաքրքրուի արեւելեան մէջ մի նիւթով, և թէպէտ իր մասնագիտութիւնը բաղդատական լեզուաբանութիւն է, պատմական և գրական ոչ մի նիւթ սակայն անտարբեր չէ իրեն, և ճշմարիտ գիտունն լատկանիշն, հետաքրքրութիւնն՝ ունի գերաշատակապէս և խօսեցանքը մեր նորագոյն հէ-դիտակաց, գրեանք և լրագրերու վրայ, և հետեւեալ օրը մեկնեցայ ես, զէպ ի հարաւային Դիրիւլ թղթակցութիւնը, սակայն, շարունակեց, աւելի յաճախ քան առաջ. Տարիէ մը աւելի անցաւ, մինչեւ վերստին Վիեննա գտնէիք. և յայնժամ, իոյն փողոցը բնակելով, շատ կը տեսնէի գինը. նա առաջնորդեց առաջին քայլերս, գերմաներէն հրատարակութեան մէջ. իր յորգորն ու ճաշակն առաջնորդեցին զիս, և միշտ տեղի ունեցայ երախտապարտ մնալու՝ իր գրական հոգւաւ. ծովեկանն համար. իմ կողմէ, կը ծանօթացնէի իրեն հայերէն կամ տանկերէն նոր լատարարութիւններն, իրրեւ պարզ տեղեկատու մը նշանակելի մատեան և հեղինակ. ներս, իրեն թողլով իր անվերջ ու յարգուած դատողութեամբ բնութիւն ու գեղեցիկը. ներկայացնել Եւրոպայի գիտական մարմնոյն. Ալյապա, սուի իրեն «Թորտու Ալգարա», որմէ ճղալեց ճառի մը նիւթն՝ ի գիտութեանց Ակադեմիա Վիեննայի (հրատարակուած իբր գրքով), Արցնիի հայերէն ձեռագրաց վրայ. Մի անգամ երբ խօսք կ'ըլլար թէ ո՞վ է Հայոց մէջ լաւագոյն տանկագէտն, իմ կարծիքն յայտնեցի, թէ Արիկեան էֆ. և, և սուի իրեն ասոր տանկերէն — հայերէն բառարանը. Միւրիկը գնահատեց զայն, և գրեց իսկ մեծ գովեստի, Վիեննայի գիտութեանց Ակադեմիայ արեւելեան լեզուաց և գրականութեանց վրայ հրատարակուած եռամսեայ թերթին մէջ. Երախտագիտութեան պարտքը մ'էր այդ իմ կողմէ՝ առ նախկին ուսուցիչն օսմաներէնս » :

«Տըդ. Միսկէր յանձնարարեց ինձ ըն-

տրելագոյն տաճկերէն երգերը գերմաներէնի թարգմանել, զոր գործադրեցիւ Լոյս տեսաւ վերոյիշեալ թերթին անցեալ գարնան թուոյն մէջ (և այժմ, ձմեռ 97, և տակաւին կը շարունակուի)»... «Հայ գրականութիւնը կը ճանչէ խիստ լաւ: Մեր լեզուն զիտէ, իբրեւ թէ բոլոր կեանքն անոր ուսումնին անցուցած ըլլար: Արդի աշխարհաբարը սակայն, զինք չի հրապուրեր այնքան, և գրաբար կը խօսի: Բայց իր մասնագիտութիւնն է պարսկերէնը: Սանսկրիտ, տաճկերէն, արաբերէն, եբրայեցերէն նոյնքան ծանօթ են իրեն, և Ամերիկայի ու Ովկէանիոյ վայրենիաց նորակազմ լեզուներն եւս կ'ուսումնասիրէ՝ բաղդատական նպատակաւ: Քաղաքական պայքարներէ հեռու, հանգարտ ու յարգուած կեանք մը կը վարէ Միւլլեր. իր խօսակցութեանց մէջ եւրեցած է ինձ իբր համոզուած հակահրէական»:

\* \*

Կենսագրական ակնարկս չիսկած՝ ի գէպ է կարծեմ՝ զնէլ աստանօր հանգուցեալ հայասեր բարեկամս մէկ խորհրդածութիւնն, հրատարակեալ Վիեննայի «Աւստրիական ամսաթերթ վիսն Արեւելից»<sup>1</sup> հտնդիսին մէջ, և թարգմանեալ ի Հանդ. ամս. 1887, յէջն 167. Խորհրդածութիւն՝ զոր ըրած է հայ մատենագիրութեան վերաբերեալ քանի մը նութատիպ զրոց հրատարակութեան առթիւ:

«Հայ ժողովուրդը կանուխ զգրիտտնէութիւն ընդունած ըլլալով, միշտ աւելի արեւմտեան քան արեւելեան կողմ միտած է՝ նաեւ, ինչպէս իւր բազմարկած աշխտայից պատմութիւնը կը վկայէ, ի ֆեսա իւր քաղաքականութեանն, որ վերջապէս Հրէից քաղաքականութեան նման՝ հայազգի ժողովրդոց ալ վայրավատին ցրուելով: Երբ այսպէս արտաքին յարաբերութիւններն ի սպառ վատ թարացան, ազգն իւր մտադրութիւնն առա-

ւելապէս իւր ներքին կենաց վրայ դարձուց, և նոր ժամանակներս՝ իւր ճոխ մատենագրութեան վրայ: Եւ մինչդեռ ուրիշ ազգեր ի կորուստ կը դիմէին՝ ինք հոս ոտից կռուան մը գտաւ, որով կարող կ'ըլլայ իւր ապագային վրայ գուարթ աշըք նայիլ, և արդի քաղաքականութեան բարեմասնութեանց մասնակից ըլլալ:


«Քանի որ այժմեան լեզուաքննութիւնն ապացուցած է՝ թէ հայերէնի հնդեւրոպական լեզուաց շարքին կը վերաբերի, որ բոնէ է թէ Եւրոպիոյ կրթեալ ժողովրդոց լեզուացն ազգակից է, Հայք իրենց լեզուովն և հին ու հնաւանդ մատենագրութեամբը մօտազոյնօ մերձեցած են մեզի. որով շնք կրնար այս ազգին ալ շուիթիւլ այն մտադրութիւնն, որ ուրիշ գերմանացեղ ժողովրդոց կը նուիրենք, զոր օրինակ Ռումաներու և Սլաւներու:

«Առաջիկայ երկասիրութիւններս ըստ մասին կը ցուցնեն՝ թէ հայազգի գիտուններն Եւրոպիոյ գիտնական շարժմանց հաղորդ են, և արեւմտից կրթութիւնն ու գիտութիւնն իրենց սեպհակականելու կարեւոր միջոցները մատակարարել կ'ուզեն իրենց հայրենակցաց. և ըստ մասին ապացոյց են՝ թէ կան հայ ազգին մէջ ալ մարդիկ, որ իրենց ազգային գրականութիւնը մեծաւ փութով կ'ուսումնասիրեն ու կը խնամեն. և թէ՛ ասոնց ալ աշխատսիրութիւնը՝ կրնան սոյն ուղղութեան մէջ ի համամատուցութիւն գալ արեւմտեայ գիտնոց երկասիրութեանց հետ»:

\* \*

Ահա այսպիսի փայլուն և բեղմնատուր կեանքէ մը ետքը՝ տարւոյս մայիսի 25ին բաժնուցեալ մեր տեսութենէն — այլ ո՛չ մեր սրբտերէն — Ուսուցչապետն Փրիդրիխ Միւլլեր, ի հասակի 64 ամաց:

Դարայարեւի



<sup>1</sup> Oesterreichische Monatschrift für den Orient,